ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Գ. Լուսավորչի փ., 12,
հեռ՝ (0264) 2-34-23, էլ. փոստ՝
gavari.hamaynqapetaran@gmail.com

N Մ-4819
25.12.2024թ.

««ՊԱՐՏԵԶ» ՏՆԿԱՐԱՆԱՅԻՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
ԿԱՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

(ՎԵԴԻ, ԹՈՒՄԱՆՅԱՆ 30, Gnumner2024@mail.ru, հեռ.՝ +37477337513)

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Գավառի համայնքապետարանի և ««ՊԱՐՏԵԶ» ՏՆԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ–ի /այսուհետ՝ Ընկերություն/ միջև 07.11.2024թ. կնքվել է ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/35-1 ծածկագրով Գավառի համայնքապետարանի կարիքների համար ապրանքի մատակարարման գնման պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ, նույն ընթացակարգի հրավերով սահմանված, պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը՝ վրաններ /այսուհետ՝ ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Հիմք ընդունելով Ընկերության կողմից 20.11.2024 թվականին ստացված գրությունը, ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/35-1 ծածկագրով պայմանագրի8.5 և 8.8 կետերիպահանջները՝ 27.11.2024 թվականին Գավառի համայնքապետարանի և ««ՊԱՐՏԵԶ» ՏՆԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ–ի միջև կնքվել է համաձայնագիր, համաձայն որի **Պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել 17.12.2024թվականը ներառյալ:**

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը /ծանուցումը/ հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումը ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Համայնքի ղեկավար՝ **Գուրգեն Մարտիրոսյան**

Կատ. Գլխավոր համայնքի ղեկավարի տեղակալ՝
Մ. Մովսիսյան